



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒ Առաջնորդական Մազր Եկեղեցի

Յիշաւսկ Եղիս Մարգարէիս  
11 ՅՈՒՆԻՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Սարկաւագական Ձեռնադրութիւն	Էջ 3
Ծանուցում	Էջ 4

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԵՆ 18.29-46

**Վ**էսօրը անցաւ, եւ Բահաղի մարգարէները շարունակեցին իրենց ցնորական կանչւրուտուքը մինչեւ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը. բայց ո՛չ մէկ ձայն:

Այն ատեն Եղիսա Թեսքացի ըսաւ գարշելի այդ կուռքերու մարգարէներուն.

- Հեռացէ՞ք այլեւս, հիմա ես իմ ողջակէզս պիտի մատուցանեմ:

Եւ անոնք հեռու գացին:

Եղիսա ժողովուրդին դառնալով ըսաւ. «Ինձի մօտեցէք»: Եւ ամբողջ ժողովուրդը անոր մօտեցաւ: Եղիսա Տիրող կործանած սեղանը վերականգնելու համար տասներկու քարեր առաւ, Յակոբի որդիներէն սերած ցեղերուն թիւին համաձայն, որուն Աստուած խօսած էր ըսելով. “Իսրայէլ պիտի կոչուիս”, այդ քարերով սեղան մը կանգնեց Տիրող անունին, եւ անոր շուրջը փոս մը փորեց, թիթեղ մը սերմնցու տաճելու խորութեամբ: Ապա փայտերը սեղանին վրայ շարեց, զուարակը կտոր-կտոր ընելով փայտերուն վրայ դիզեց եւ հրամայեց.

- Զորս սափոր ջուր բերէք եւ ողջակէզին ու փայտերուն վրայ թափեցէք:

Ապա ըսաւ. «Կրկնեցէ՞ք նոյնը»: Եւ անոնք նոյն ձեռով կրկնեցին: «Երրորդ անգամ ըլլալով կրկնեցէ՞ք նոյնը», ըսաւ ան, եւ երրորդ անգամ մըն ալ այնպէս ըրին: Զուրը սեղանին շուրջ հոսեցաւ եւ լեցուց փոսը:

Երբ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը հասաւ, Եղիսա մարգարէ սեղանին մօտեցաւ եւ աղօթեց աղաղակելով.

- Ո՛վ Տէր, Աքրահամի, Իսահակի եւ Յակոբի

Աստուածը, ցո՛յց տուր այսօր թէ դո՛ւն ես իսրայէլի Աստուածը եւ ես՝ քու ծառադ, եւ թէ քեզի համար ըրի այս բոլորը: Լսէ՛ ինձի, Տէ՛ր, պատասխանէ՛ ինձի կրակով, որպէսզի այս ժողովուրդը գիտնայ թէ դո՛ւն ես Աստուածը, ո՛վ Տէր, եւ դո՛ւն ես որ ետ քեզի կը դարձնես իրենց սիրտը:

Այն ատեն Տէրը երկինքէն կրակ ղրկեց, որ այրեց ողջակէզն ու փայտերը, քարերն ու հողը, եւ լափեց փոսին մէջ հաւաքուած ջուրը: Ասիկա տեսնելով՝ ամբողջ ժողովուրդը երեսի վրայ գետին ինկաւ, ըսելով. «Արդարեւ Տէ՛րն է Աստուածը, Տէ՛րն է Աստուածը»:

Եղիսա անոնց հրամայեց. «Բոնեցէ՞ք Բահաղի մարգարէները. ոեւէ մէկը ողջ չմնայ»: Եւ ժողովուրդը բռնեց զանոնք: Եղիսա զանոնք Կիսոն կոչուած հեղեղատը իջեցուց եւ հոն կոտորեց զանոնք:

Այնուհետեւ Եղիսա Աքաարին ըսաւ. «Գնա՛ հիմա, կե՛ր եւ խմէ՛, որովհետեւ մօտալուտ սաստիկ անձրեւի ձայն կ'առնեմ»: Աքաար ուտելու եւ խմելու գնաց, իսկ Եղիսան Կարմելոս լերան գագաթը բարձրացաւ, մինչեւ գետին խոնարհեցաւ ու դէմքը ծունկերուն մէջ առաւ, եւ իր ծառային ըսաւ. «Գնա՛ եւ ծովուն կողմը նայէ»: Պատանին գնաց նայեցաւ եւ ըսաւ. «Բան չկայ»:

- Դարձեալ գնա՛, - ըսաւ Եղիսա, եւ եօթն անգամ պատանին ետ գնաց: Եօթներորդ անգամին պատանին ըսաւ.

- Ահա մարդու մը ձեռքին չափ փոքրիկ ամպ մը կ'ելլէ ծովէն:

Այն ատեն Եղիսա ըսաւ.

- Գնա՛ եւ Աքաարին ըսէ՛. “Կառքդ լծէ՛ եւ տունդ դարձիր որպէսզի անձրեւի չբռնուիս”:

Շուտով երկինքը ամպերով մթնցաւ. հով ելաւ եւ սաստիկ անձրեւ սկսաւ: Աքաար իր կառքը հեծաւ եւ Յեղայէլ փութաց: Տիրող զօրութիւնը օգնեց Եղիսայի, որ պարեգօտը մէջքին ամրացնելով վազեց եւ Աքաարէն առաջ մտաւ Յեղայէլ քաղաքի դռնէն:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԶՈՐՌՈՐԴ**  
**ԳԻՐՔԻՆ**  
**2.1-15**

**Ե**րբ հասաւ ժամանակը, որ Տէրը մըրթիկով երկինք պիտի բարձրացնէր եղիան, եղիան եւ եղիսէ գաղգաղայէն մեկնեցան: Եղիան եղիսէին ըստ:

- Հո՛ս մնա, Տէրը զիս Բեթէլ կը դրկէ: Եղիսէ պատասխանեց.
- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:
- Բեթէլ եկան: Բեթէլ բնակող մարդարէները խումբով եկան եղիսէի եւ ըսին.
- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:
- Գիտեմ, այդ մասին մի՛ խօսիք, - պատասխանեց Եղիսէ:
- Ապա Եղիա Եղիսէի ըստ:
- Հո՛ս մնա, Տէրը զիս Երիքով կը դրկէ: Եւ ան պատասխանեց.
- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:
- Եւ Երիքով եկան: Երիքով բնակող մարդարէները խումբով մօտեցան Եղիսէի եւ ըսին.
- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:
- Գիտեմ, մի՛ խօսիք այդ մասին, - պատասխանեց Եղիսէ:
- Եղիա Եղիսէի ըստ:
- Հո՛ս մնա, Տէրը զիս Յորդանան կը դրկէ: Եղիսէ պատասխանեց.
- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երդնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:
- Եւ Երկուքը միասին դացին: Մարդարէներու խումբէն յիսուն հոգի հետեւեցան անոնց մինչեւ Յորդանան գետ: Եղիա եւ Եղիսէ գետեղըն կանդ առին, իսկ միւսները կանգնեցան քիչ մը հեռու: Եղիա իր վերարկուն հանեց, ծալլեց զայն եւ անով զարկաւ ջուրերուն: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան, եւ անոնք Երկուքով անցան ցամաք տեղէն: Երբ անցան, Եղիա ըստ:
- Եղիսէ, քանի դեռ հետդ եմ՝ խնդրէ ինչ որ կրնամ ընել քեզի համար:
- Խնդրեմ. մարդարէական հոգիէդ կրկին բաժին թող ժառանգեմ, - պատասխանեց Եղիսէ:
- Դժուար բան խնդրեցիր, - ըստ Եղիա, - բայց պիտի ստանաս զայն, եթէ տեսնես իմ Երկինք բարձրացուիլս. այլապէս պիտի չստանաս:
- Եւ մինչ խօսելով կ'երթային, ահա յանկարծ

հրեղէն ձիերով կառք մը իրարմէ բաժնեց Եղիան ու Եղիսէն, եւ Եղիա մըրթիկով երկինք բարձրացաւ: Եղիսէ տեսաւ եւ աղաղակեց. «Հա՛յր, հա՛յր, ահա Խրայէլի կառքն ու հեծեալները»: Եւ այլեւս չտեսաւ զայն: Ուստի քաշեց, պատռեց իր վերարկուն, զայն երկու կտորի վերածելով: Ապա վերցուց Եղիայի վերարկուն, որ իր վրայ ինկաւ, եւ դարձաւ Յորդանան գետին եղերքը: Առաւ Եղիայի վերարկուն եւ ջուրերուն զարկաւ, բայց անոնք չբաժնուեցան: Այն ատեն գոչեց. «Ո՞ւր ես, Տէր, Եղիայի Աստուածը», եւ դարձեալ ջուրերուն զարկաւ: Ջուրերը այս ու այն կողմ բաժնուեցան եւ Եղիսէ անցաւ միւս կողմ: Երբ Երիքովի մարդարէները դիմացէն տեսան զինք, ըսին. «Եղիայի հոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ»: Գացին դիմաւորեցին զինք եւ մինչեւ գետին խոնարհեցան անոր առջեւ:

**ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԻՆ**  
**5.16-20**

**Q**եր մեղքերը իրարու խոստովանեցէք Եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: Եղիա մեզի նման կիրքերու ենթակայ մարդ էր. բայց Երբ աղօթեց որ անձրեւ չգայ երեքուկէս տարի չանձրեւեց Երկրի վրայ: Ապա դարձեալ աղօթեց եւ Երկինքը անձրեւ տեղաց ու Երկիրը իր բերքը տուաւ:

Եղբայրներս, Երբ ձեզմէ ուեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի եւ ուրիշ մը յաջողի զայն վերադարձնել, գիտցէք թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ անոր հոգին մահուընէ կը փրկէ եւ թէ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ**  
**ՂԱՍ ՂՈՒԿԱՍԻ**  
**4.25-30**

**U**Եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Զեզի օրինակներով խօսիմ: Խրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, Երբ Երեքուկէս տարի Երկինքը չանձրեւեց եւ ամբողջ Երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ուեւէ մէկուն չըրկուեցաւ, այլ զրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեհիթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարդարէի օրերուն Խրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը»:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին

մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժը նելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լերան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

## ՍԱՐԿԱՎԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. Յ.

Կիրակի, 4 Յունիս 2017-ին, Հոգեգալստեան տօնն էր: Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցին խուռաներամ լեցուած էր Ս. Պատարագի սկիզբէն: Յետ Թափօրի շարական՝ «Առաքելոյ աղաւնոյ»ի երգեցողութեան, երբ պատարագիչը եղանակեց «Զի ողորմած»ը, երգուեցաւ «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» շարականը: Առաջնորդ սրբազանը՝ Գերշ. Տ. Բաբէէն Արքեպիսկոպոս թափօրով Ս. Բեմ բարձրացաւ եւ աջակողմին զետեղուած գահին բազմեցաւ: Սարկաւագութեան թեկնածուները՝ Կիսասարկաւագներ Թորոս Պապիկեան, Կարօ Նորիստեան, Մուրատ Սանսուեան եւ Կորիւն Գոյունեան, որոնք ատեանի յառաջամասին ծունկի եկած էին նախքան «Զի ողորմած»ը, շարականին երգեցողութեան հետեւած



սաղմոսացութեան ատեն՝ Ս. Բեմ բարձրացան, խարտաւիլակութեամբ՝ Արժ. Տ. Հրայր Աւ. Քհն. Նիկոլեանի: Կիսասարկաւագները Ս. Բեմին ձախ կողմը կեցան:

Հովիւր դիմելով Առաջնորդ սրբազանին՝ խնդրեց որ ընծայեալները Սարկաւագ ձեռնադրէ, որովհետեւ անոնք արժանաւոր են այդ կոչման, մաքուր կեանք կ'ապրին եւ խղճամիտ են:

Առաջնորդ սրբազանը ընդունեց վկայութիւնը, եւ Հօր. Որդիինու Ս. Հովիին անունով Սարկաւագութեան կոչեց զանոնք, աղերսելով Երկնաւոր Հօր, որ Ան իր Ս. Աջը երկարէ եւ օրհնէ զանոնք նոր կոչմամբ, զօրացնէ զանոնք՝ որպէսզի առաքինի կեանք վարեն, ու միշտ Որդիին գթութեամբ եւ Ս. Հովիին ճշմարտութեամբ լեցուին, ու ծառայեն Ս. Եկեղեցիին, մինչեւ այն օրը՝ երբ աստուածային Սուրբ Ներկայութեան կանգնելու վախճանական ցնծութիւնը վայելեն:

Ընծայեալները որ Առաջնորդ սրբազանի գահին



առջեւ կիսաբոլոր կազմած էին՝ արեւմուտք դարձան, եւ ծնկաչոք շարժելով դէպի Ս. Բեմին կեդրոն-յառաջամասը՝ իրենց ձեռքերը վեր բարձրացուցին՝ ի նշան չարէն ու աշխարհիկ բարքերէն հրաժարման: Եւ Առաջնորդ սրբազանը Ս. Բեմին կեդրոնը գալով, եւ իր կողքին ու ձայնակից ունենալով Հոգ. Տ. Վարդան Վրդ. Թաշճեանը, Արժ. Տ. Հրայր Աւ. Քհն. Նիկոլեանը, եւ Հովիւր, Յ անգամ երգեց այնքան ներշնչիչ «Աստուածային եւ Երկնաւոր շնորհ»ը եւ իւրաքանչիւր անգամ յանուն հաւատացեալներուն՝ Դպրաց դասին վկայութիւնը լսեց, թէ ընծայեալները արժանի են: Ապա դարձաւ ու բազմեցաւ գահին: Ընծայեալները դարձեալ կիսաբոլոր կազմեցին Առաջնորդ սրբազանին առջեւ, որ աղօթեց եւ խնդրանքներ մատոյց Աստուծոյ:

Աղօթէն ետք, ընծայեալները զոյգ զոյգ կեցան Ս. Բեմին երկու կողմը:

Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Ողջոյն»ը: Նախքան այդ՝ ընծայեալները վերստին կիսաբոլոր կազմեցին Առաջնորդ սրբազանի գահին



առջեւ: Սրբազնը հրաւիրեց հաւատացեալները, որ սուրբ սիրով ընդունին զանոնք եւ օգնեն ու քաջալերեն անոնց՝ ի փառս Ամենասուրբ երրորդութեան: Ապա անոնց ձախ դաստակէն առաւ ուրարները եւ ուսերուն դրաւ, պատուիրելով՝ «Յանուն մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, առէք մաքուր եւ սուրբ այս ուրարները եւ մեղքի բոլոր պատրանքները թօթափեցէք, որպէսզի Աստուծոյ Ներկայութեան կանգնիք արժանաւորապէս»: Տուաւ Ս. Աւետարանը եւ պատուիրեց, որ զայն շարունակեն կարգալ մեծ երկիւղով՝ ի լուր ժողովուրդին, եւ ի յիշատակ ննջեցելոց: Տուաւ Ս. Սկիհը եւ պատուիրեց, որ զայն մեծ երկիւղով մատուցեն պատարագիչին, որովհետեւ անոր մէջ կ'իջնէ ինքը Աստուծած:

Յետ այս պատուէրներուն, ընծայեալները շարուեցան Ս. Բեմին ձախ կողմը: Առաջնորդ սրբազնը կանգնեցաւ Ս. Բեմին մէջտեղը եւ բուրգառը առնելով՝ անոնցմէ իւրաքաչիւրին տուաւ եւ պատուիրեց, որ Ս. Եկեղեցւոյ մէջ խնկարկելով՝ բուրաւէտեն Տիրոջ տունը: Ընծայեալները մէկ առ մէկ, ըստ կարգի առջեւ եկան ու խնկարկեցին Ս.

Սեղանին եւ ժողովուրդին: Այս պաշտօնէն վերջ, անոնք հաւաքուեցան եւ ծունկի եկան Առաջնորդ սրբազնին առջեւ, որ Ս. Խաչին պահպանութիւնը աղերսող աղօթքը կատարեց: Այն պահուն, Դպրաց դասը երգեց «Ստեփանոս քաղցրիկ տատրակ»ը: Նախքան իր պատգամը՝ Առաջնորդ սրբազնը ուրար տուաւ դպիր Կարէն Նաճարեանին:

Իր պատգամով՝ ան հրաւիրեց ընծայեալները, որ Ս. Եկեղեցւոյ ծառայեն քաջաբար եւ նախանձախնդրութեամբ՝ նման Նախասարկաւագ ու Նախավկայ Ս. Ստեփանոսի:

Թէ՛ սարկաւագները եւ թէ՛ ուրարակիրը կանոնաւորաբար փորձերու հետեւած էին Արժ. Տ. Հրայր Աւ. Քչն. Նիկոլեանի հետ՝ անհրաժեշտ գիտելիքներ իւրացնելով: Տակաւին պիտի հետեւին՝ որովհետեւ ընդարձակ է ասպարէզը:

Հոգեգալստեան տօնին կատարուած Զեռնադրութիւնը եւ ուրարի տըւչութիւնը՝ Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցին առաւել պայծառացուցին եւ պիտի պայծառացնեն:

**ԱՅԵԼԵՖԷ՛Ր ԵԿԵԿԵԹԻՒՅՍ ԴԻՎԱՏԵՏՐԻ ԷԶԾ**

ԵՒ ՁԵՐ ՀԱՒԱԿՈՒԹԻՒՆ յԱՅՏԱԵԹԷՔ (like).

[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](https://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)